Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան

պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

« 19 » փետրվարի 2015 թ. նիստում

Խորհրդի նախագահ՝ _____Վ. Գրիգորյան

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Մնացորդային գիտելիքի ստուգումը նպատակ է հետապնդում վեր հանել ուսումնառության նախորդող շրջանում ուսումնասիրված առարկայի գիտելիքների այն հատվածը, որն հիմնարար է մասնագիտական հետագա գործունեության համար և մնայուն է մասնագետի հիշողության մեջ: Մնացորդային գիտելիքի բարձր մակարդակի ապահովումը պետք է դիտվի որպես ուսումնական գործընթացի որակի գնահատման և առանցքահենության խնդիր, իսկ մակարդակն ինքնին որպես դասախոսի և ուսանողի համատեղ աշխատանքի արդյունք:

Մնացորդային գիտելիքը այն նվազագույն պաշարն է, որ ուսանողը պարտավոր է մտապահել՝ ելնելով ծրագրային պահանջներից և իր բնատուր հնարավորություններից:

Մնացորդային գիտելիքի ստուգման անհրաժեշտությունից ելնելով՝ կարելի է առանձնանցնել ուսուցման ընթացքում ստացվող գիտելիքների 4 մակարդակ.

1.1. երկար մտապահման ենթակա մնացոդային գիտելիք, կամ ակտիվ պաշար հետագա մասնագիտական աշխատանքում և կյանքում,

1.2. մոռացվող, բայց մասնագիտական իրավիճակում վերականգնվող գիտելիքներ կամ պասիվ պաշար, որը կարելի է անվանել ակտիվ պաշարի ռեզերվ,

1.3. «օգնական գիտելիքներ», որոնք մտապահվում են կարճ ժամանակահատվածով, բայց անհրաժեշտ են այլ նյութերի յուրացման համար:

1.4. միջառարկայական գիտելիքներ, որոնք ձեռք են բերվում ոչ մասանգիտական առարկաների միջոցով:

Մնացորդային գիտելիքները իրենց հիմքում ունեն 3 բաղադրիչ՝
ա) նյութի մտապահում,
բ) նյութի գիտակցում,
գ) նյութի օգտագործում գործնական և հետազոտական գործունեության մեջ:

2. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ

Սույն կարգը սահմանում է ինստիտուտում ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման կազմակերպման, անցկացման, գնահատման և արդյունքների օգտագործման չափանիշները, սահմանում ընթացակարգն ու անցկացման հնարավոր ժամկետները:

Կարգը մշակված է բարձրագույն կրթությանը ներկայացվող արդյունքահենության պահանջների բավարարման, որակի ապահովման խնդիրներին, ՀՀ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքների համաձայն, բարձրագույն մասնագիտական կրթության բարեփոխումներին ներկայացվող պահանջներին համապատասխան:

Սույն կարգով սահմանված պահանջները տարածվում են ԳՊՄԻ-ում բոլոր մասնագիտությունների գծով սովորող ուսանողների վրա:

3. ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

3.1. Ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման մասին որոշումը ուսումնամեթոդական վարչության (ՈՒՄՎ) ներկայացմամբ քննարկվում է ռեկտորատի նիստում, հաստատվում ռեկտորի հրամանով:
ՈՒՄՎ-ն ռեկտորին է ներկայացնում մնացորդային գիտելիքների իրականացման
ա) ժամանակահատվածի,
բ) օբյեկտի/առարկայացանկի/ ընտրության
գ) ստուգման ձևի ու հարցերի պատրաստումը:

3.2. Ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգումը կարող է անցկացվել ակադեմիական խմբերում, հոսքերում և բաժիններում առարկայի վերջնարդյունքների ստուգումներին (միջանկյալ, ամփոփիչ) հաջորդող քննաշրջանի ավարտից ոչ ուշ, քան 2 շաբաթվա ընթացքում:

3.3. Ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման ենթակա առարկաների ցանկի վերաբերյալ առաջարկները ներկայացվում է ՈՒՄՎ-ի կողմից՝ կիսամյակի ընթացքում իրականացրած ստուգումների հիման վրա:

3.4. Ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգումը անցկացվում է գրավոր ստուգողական կամ թեստային աշխատանքի միջոցով՝ ծածկագրված տետրերով:

3.5. Ուսանողների մնացորդային գիտելիքների գրավոր աշխատանքների ստուգումը իրականացվում է ռեկտորի նշանակմամբ ամբիոնների առաջնակարգ մասնագետներից ձևավորված հանձնաժողովի կողմից:

3.6. Ձևավորված հանձնաժողովի կողմից կազմվում է առաջադրվող տարբերակը կամ թեստը՝ միջանկյալ կամ ամփոփիչ քննաշրջանի հարցաշարերի հիման վրա:

4. ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

4.1. Ուսանողների մնացորդային գիտելիքների գնահատականները փոխանցվում են դեկանատ և մուտքագրվում ֆակուլտետի մնացորդային գիտելիքների էլեկտրոնային ֆայլում, իսկ աշխատանքները մնում են ամբիոններում 3 տարվա ընթացքում:

4.2. Ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման արդյունքը համարվում է բավարար, եթե հարցմանը մասնակից ուսանողները վաստակում են քննաշրջանում ստացած միավորի 60%-ը:

4.3. Մնացորդային գիտելիքների ստուգման արդյունքները ներկայացվում են նաև ուսանողներին:

4.4. Նույն առարկայից ցածր արդյունքների գրանցման դեպքում ռեկտորի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, տվյալ առարկայի արդյունքների օբյեկտիվ գնահատման, ցածր արդյունքների պատճառների բացահայտման, ինչպես նաև եզրակացությունների կայացման համար:

Հանձնաժողովի եզրակացությունը քննարկվում է ֆակուլտետային խորհրդում, ռեկտորատի նիստում, ըստ անհրաժեշտության նաև գիտական խորհրդի նիստում: